ԲՈՒՀԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Եղե՛ք ուշադիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ✓ ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 1-32-րդ և 46-66-րդ. տվյալ սյունակի՝ Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- ✓ կարճ պատասխանով առաջադրանքներից՝
  - 33-38-րդ և 67-69-րդ. 8-ական վանդակների համապատասխան համարի (համարների) տակ դրե՛ք X նշան (նշաններ),
  - 39-44-րդ. տվյալ վանդակներում գրե՛ք առաջադրանքների պահանջներին համապատասխանող թվերը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում փակագծերում նշված տառը:**

1) անհողդող-, մակար-ուկ, ար-ուկ, դարավան- **(ղ)**
2) բ-կտել, ընդելու-վածք, հիպնո-, բևեռախույ- **(զ)**
3) կատարա-ու, գլուխկոն-ի, վեհապան-, ատաղ-ագործ **(ծ)**
4) հայթ-այթել, արհամար-ել, հեղ-եղուկ, Ջրօր-նեք **(հ)**

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի *ը*-ն սխալ տեղադրված:**

1) մարմ(ը)նեղ, մրմ(ը)նջալ, կերակ(ը)ղել
2) կայս(ը)ղուհի, հրաձ(ը)գարան, կրկ(ը)նություն
3) երկ(ը)ղորդ, դստ(ը)ղիկ, կտ(ը)ղվածք
4) հագ(ը)նվել, վաթսուն(ը)մեկ, արծ(ը)վային

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին վանկը *չի* շեշտվում:**

1) մանր, իհարկե, ասես թե
2) մշտամրմունջ, միմիայն, որերորդ
3) միթե, վեհանձն, հակակշիռ
4) ծաղկափթիթ, վագր, պար գալ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է *ու*-ն հնչյունափոխվել *ը*-ի:**

1) երեսնական, ջրարբի, արևմտյան
2) ըմպան, նշաձև, սնվել
3) կռապաշտ, գլխիկոր, հրթիռ
4) թխպոտ, սնահավատ, սրամիտ

5 **Ո՞ր տարբերակում է տրված բառի հնչյունափոխված արմատը սխալ վերականգնված:**

1) դիտարժան → դետ
2) լկանք → լլուկ
3) բնավեր → բուն
4) գիտակ → գետ

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) պաղատել, թախանձել, խնդրել, աղաչել
2) պատնեշ, պատատուկ, պարիսպ, պատվար
3) վատաբանել, պախարակել, անարգել, ժխտել
4) անիմաստ, անմիտ, անկաշկանդ, անհեթեթ

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

1) գնդասեղ, պարտիզպան, քաղաքակիրթ
2) անտառապատ, նրբերանգ, անդորրագիր
3) ընձառյուծ, վարդագույն, լուսազգայուն
4) հարգալից, ճառագայթ, հեռակա

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ածանցի հնչյունափոխություն կա:**

1) վերնահարկ, մշակութային, սփռոց
2) հատկություն, առօրեական, փախստական
3) անասնակեր, վրձնահարված, ժողովրդավար
4) մարզչական, պտղամիս, միութենական

9 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմված տրված նախածանցով:**

1) ***առ-*** առափնյա, առկախ, առինքնում
2) ***արտ(ա)-*** արտասուք, արտացոլք, արտաժամ
3) ***ան-*** անապական, անարգաբար, անագագործ
4) ***ապ-*** ապերասան, ապառիկ, ապստամբ

10 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **օշարակ**–մրգահյութի ըմպելիք, **դիպակ**–գրական ստեղծագործության հատված
2) **ծերպ**–մի բանի մեջ բացված ճեղք, **ծխնի**–որոշ ժամանակ ծխի մեջ պահած
3) **խայտաճամուկ**–վառ և բազմազան գույներով, **ճարճատյուն**–բորբոքվելով վառվելու կրկնվող ձայն
4) **սնանկ**–նյութական միջոցներից զուրկ, **բանուկ**–միայն հետիոտների համար նախատեսված

11 **Ո՞ր նախադասության մեջ *անգամ*-ը վերաբերական *չէ:***

1) Նրա մորուքը սկսվում էր համարյա աչքերի տակից ու ծածկում ամբողջ երեսն ու կոկորդը. արծվային քիթն անգամ ծածկված էր մազերով:
2) Տվել եմ քեզ բախտս անխառ, Արևս, երկինքս Եվ ինչքս, որ անգամ Չունեի ես ինքս:
3) Ես կրունկներով խփեցի ձիու կողերին. մի անգամ էլ նա կանգնեց հետին ոտքերի վրա, զիլ խրխնջաց և առաջ նետվեց:
4) Օ՜, չի եղել մեր գայլը պղնձյա Եվ ո՛չ մարմարիոնյա և ո՛չ անգամ քարե:

12 **Ո՞ր նախադասության մեջ հարակատար դերբայ *չկա:***

1) Մայրը ուշադիր հետևում էր, մինչև որ որդին անցավ սառցակալած ճանապարհը:
2) Նա գիտակցում էր, որ վաղ թե ուշ պետք է վեր կենա ու երես առ երես նայի իր հետևում կանգնածին:
3) Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով:
4) Երեկոյան կողմ նավը հատեց հասարակածը՝ ուղղություն վերցնելով դեպի երկրագնդի հարավային բևեռը:

13 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա**:

1) Նա հորս մտերիմ ընկերն է եղել և գործակիցը:
2) Օրերով տնից դուրս չէր գալիս:
3) Թաղի տղաները մի տեսակ դժվարությամբ էին ընկերանում միմյանց հետ:
4) Ա՜նց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:

14 **Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ *չկա:***

1) Քաղցից ու թշնամուց հալածված գաղթականները վերջապես անցան Արաքսը:
2) Զգացի, որ տղան շատ վրդովվեց իմ այդ խոսքից, և փորձեցի մեղմել անհաճո իրավիճակը:
3) Նա գնում էր մշուշով ծածկված ճամփեզրով՝ գլխահակ ու տխուր խորհելով եղածի մասին:
4) Նա գլխաբաց էր, երեսը՝ անլվա, աչքերի սպիտակուցները՝ դեղնած, մազերը՝ գզգզված, դեմքը՝ մագաղաթի պես գունատ:

15 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք մակբայ են:**

*Կանչում է **1. կրկին**, կանչում **2. անդադար***
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն,
*Ու թևերն **3. ահա** փռած **4. տիրաբար**՝*
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն:
Ուր որ հայրենի օջախի առաջ
***5. Վաղո՜ւց** **6. կարոտով** սպասում են ինձ*
*Ու ճմռան երկար գիշերը **7. նստած**՝*
*Խոսում են Լոռու **8. հին-հին** քաջերից:*

1) 1, 2, 4, 5
2) 1, 3, 4, 5, 7
3) 2, 3, 6, 7, 8
4) 2, 4, 5, 7, 8

16 **Ո՞ր նախադասության մեջ պատճառական բայ կա:**

1) Երկար ժամանակ քարացած հայացքով նայում էր խավարի մեջ, հետո նրա պրկված դիմագծերն ասես թուլացան:
2) Լինում էին վայրկյաններ, երբ նա ուզում էր թողնել սքեմը, հեռանալ և անհայտության մեջ մոռացության տրվել:
3) Միանգամից վերացան իր սերնդակիցների թյուր պատկերացումներն աշխարհի և նրա կառուցվածքի մասին:
4) Նա միաժամանակ ցանկացել է մանուկներին սովորել տալ հայոց այբուբենը՝ նրա ամեն մի հերթական տառով սկսելով իր ոտանավորի տները:

17 **Քարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Ակամա սկսում ես հաշվել այն տարիները, որ ապրել ես հարազատներից հեռու:*
   Ակամա սկսում ես հաշվել հարազատներից հեռու ապրածդ տարիները:
2) *Եղնիկը, թեև ընտելացել էր մեզ, մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ, լռիկ նայում էր անտառածածկ սարերին:*
   Չնայած եղնիկի՝ մեզ ընտելանալուն՝ մեկ-մեկ մեզնից թաքուն բարձրանալով պատշգամբ՝ լռիկ նայում էր անտառածածկ սարերին:
3) *Նրան պառկեցրին, որ մի քիչ հանգստանա ճանապարհ ընկնելուց առաջ:*
   Նրան պառկեցրին՝ ճանապարհ ընկնելուց առաջ մի քիչ հանգստացնելու համար:
4) *Դա նշանավոր հեղինակն էր «Կայծեր» վեպի, որ արդեն մի քանի ամիս շարունակ բոցավառում էր հայ երիտասարդության սրտերը:*
   Դա արդեն մի քանի ամիս շարունակ հայ երիտասարդության սրտերը բոցավառած «Կայծեր» վեպի նշանավոր հեղինակն էր:

18 **Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:**

1) Դաշտը խոր նիրհել էր:
2) Վա՜յ, կարծես ընկնում եմ:
3) Այժմ անձրևում է:
4) Սենյակում չաղմկե՛լ:

19 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները:**

1. Թեև հագին ռազմական հանդերձանք էր, սակայն դա բնավ չէր նսեմացրել նրա կանացի թովչանքը:
2. Թե հնար լիներ գտնել ձեռագիր մատյանների և մեղեդու գունային համապատասխանությունը, կստանայինք նրբահյուս մանրանկարների և զարդերի ձայնաշարեր:
3. Նա պարզ տեսնում էր, որ իր հրապույրը մարդկանց աչքում պայմանավորված է մեծ մասամբ իր հարստությամբ:
4. Հենց ծնողների ցանկությունն էլ այն էր, որ նա մոռանար արտասահմանում կրթությունը շարունակելու մասին:

ա. պայմանի պարագա
բ. ժամանակի պարագա
գ. ուղիղ խնդիր
դ. ստորոգելի
ե. զիջման պարագա

1) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
2) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
3) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1-ա, 2-ե, 3-դ, 4-բ

20 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Հայրս ինձ պատմում էր քաղաքացիական կռիվներից, որոնց մասնակցել էր Ռուսաստանում, և նա կարծում էր, որ պատերազմի ամենածանր տեսակը հենց քաղաքացիական պատերազմն է:

1)


2)


3)


4)


21 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա:***

1) Բաժակը, որ արդեն մոտեցրել էր շուրթերին, դրեց սեղանին և դիմեց մեզ անհանգիստ ու հուզված:
2) Թե ում էի պարտական իմ փրկության համար՝ ես այդպես էլ չիմացա, բայց այդ միտքն ինձ երկար ժամանակ տանջում էր:
3) Լրտեսը՝ խորհրդավոր ուղեկիցը, քարակարկառի արանքից հապշտապ դուրս պրծնելով՝ փախավ դեպի շամբուտը:
4) Այն զգացումները, որոնք հատուկ են բոլորիս, ամենևին գոյություն չունեին նրա համար և մեղադրել նրան դրա համար անիմաստ էր:

22 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածվել:**

Կամելով գնալ ավելի ուժգին՝ թաղվեցի սաստիկ,
Անչափին միտված՝ իմին չհասա,
Բարձրագույններին ձգտելով անդուլ՝
Նախկին տեղից էլ գահավիժեցի,
Երկնային ուղուց անդունդներ ընկա,
Որքան ավելի շատ զգուշացա,
Այնքան ավելի վնաս կրեցի....

1) անձնավորում
2) համեմատություն
3) բաղաձայնույթ
4) հակադրություն

23 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Հյուրանոց մտնելով՝ իր որոնող հայացքն անմիջապես գցեց վահանակին, ……:

1) որտեղ արդեն չկար հարևան սենյակի բանալին
2) ուստի անտարբեր նայում էր բաց լուսամուտից դուրս
3) մինչև հյուրանոցի ծառայողի հետ մի քանի բառ փոխանակելը
4) մի ակնթարթ կանգ առնելով շեմին

24 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հայաստանի տարածքում՝ Արագած լեռան վրա, Գեղամա լեռներում, Սյունիքում և այլուր, առկա են վաղնջական գծանկարչության վկայություններ՝ նախամարդու կողմից արված ժայռապատկերները:
2. Գծանկարչությունը կերպարվեստի հին տեսակ է. գծանկարչության հնագույն նմուշներից են ժայռերի, քարանձավների պատերին արված նկարները:
3. Հետագայում այն նոր վերելք ապրեց Հովնաթանյանների, ապա Հ. Այվազովսկու, Վ. Սուրենյանցի, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյանի արվեստով:
4. Միջին դարերից սկսած՝ մեզ հայտնի են որմնանկարչության, մանրանկարչության այնպիսի նմուշներ, որոնցից երևում է, որ հայկական գծանկարչությունը այն ժամանակ արդեն զարմանալի կատարելության էր հասել:

1) 1, 3, 4, 2
2) 2, 4, 1, 3
3) 1, 4, 2, 3
4) 2, 1, 4, 3

25 **Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Ա. Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքից:**

1) Լուիզա, սինյորա Ստեֆանիա, Մարթա
2) Լևոն, Միքայել, Իցկո
3) Ալմաստ, Կավալլարո, Չաուշենկո
4) Լուկրեցիա, Անտոնինա, Չելլինի

26 **Ո՞ւմ խոսքն է.**

Մինչ դու գնացեր
Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ:

1) Տիգրանի («Տիգրան և Աժդահակ»)
2) Հայկի («Հայկ և Բել»)
3) Արտավազդի («Արտաշես և Արտավազդ»)
4) Արա Գեղեցիկի («Արա Գեղեցիկ և Շամիրամ»)

27 **Պ. Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Աստղ մ՚ալ ես կ՚երթամ հավելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՛չ անբիծ
Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,
Որք թրռին այրել ճակատն երկնքին...

1) «Լճակ»
2) «Սիրել»
3) «Տրտունջք»
4) «Իմ ցավը»

28 **Տրված հատվածներից որո՞վ է ավարտվում Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպը:**

1) «Այսպես ուրեմն, կարգվելու նպատակով Պոլիս եկողն աղջիկ մ՚իսկ տեսնելու ժամանակ չունեցավ և, ինչպես կ՚ըսեն, **բուրդ ու բապուճ** փախավ մայրաքաղաքես»:
2) «Մենք կը հրատարակենք սույն գործն՝ ոչ այնքան մեղադրելու նպատակավ ազգային խմբագիրներն, հեղինակներն, բանաստեղծներն և այլն, որքան ներկայացնելու համար ապագա սերնդյան՝ ժամանակիս գրական մարդոց ողբալի կացությունն և գրականության մասին ազգային մեծատուններու սարսափելի անտարբերությունը»:
3) «Մեծատուններն ալ կը հիշեն Աբիսողոմ աղան, երբ գրական մարդ մը անոնց մեկենասությունը խնդրե:
- Աբիսողոմ աղա չենք մենք,- կ՚ըսեն»:
4) «Երբ երկու-երեք հեղինակք մեկտեղին, «**Ինտոր** փախուցինք սա Աբիսողոմ աղան» կ՚ըսեն ու կը խնդան քիչ մը: Իսկ երբ դրամական տագնապի մեջ գտնվին, «Աստված, Աբիսողոմ աղա մը ղրկե մեզի» կ՚ըսեն և իրենց մտքով ալ կը հավելուն. «Խնդրեցե՛ք զԱբիսողոմ աղան, և ամենայն ինչ հավելցի ձեզ»:

29 **Ո՞ր բառն է բաց թողած:**

.....սերունդների
Աչքն է դիպել լույս գագաթին
Ու անցել:

1) Եղեռնապուրծ
2) Խուճապահար
3) Մահախուճապ
4) Աստանդական

30 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. Իմ բացված սրտում հնչում է մի երգ
բ. Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք
գ. Անտես զանգերի կարկաչն եմ լսում
դ. Կարծես թե մեկը ինձ է երազում

1) ա, գ, դ, բ
2) գ, բ, դ, ա
3) ա, բ, գ, դ
4) գ, ա, դ, բ

31 **Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում ինչո՞ւ է Աշոտ Երկաթն ամուսնանում Սահականույշի հետ:**

1) Ժամանակավոր հրապուրանքը սիրո հետ է շփոթում:
2) Տուրք է տալիս արքայամոր վաղեմի ցանկությանը:
3) Նպատակահարմար է համարում քաղաքական նկատառումներով:
4) Դրանով ցանկանում է ցավ պատճառել Սյունիքի իշխանին:

32 **Ա. Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Միակ ժամացույցն ինձ մոտ էր: Մի օր էլ բլրակը բարձրանալիս ոտքս սայթաքեց, ընկա սառույցի վրա, գրպանիս մեջ ժամացույցը փշրվեց և մինչև տարվա վերջ մնացի առանց ժամացույցի: Արև օրերին ստվերով էինք ժամ որոշում, թխպած ժամանակ՝ երբ հոգնեինք»:

1) «Խոնարհ աղջիկը»
2) «Մթնաձոր»
3) «Ալպիական մանուշակ»
4) «Միրհավ»

33 **Ո՞ր բառերում ուղղագրական սխալ կա:**

1. առընթեր, 2. որձկալ, 3. ընդդարմանալ, 4. մտածածին, 5. խափշիկ, 6. հանդիպակաց, 7. կցկվել, 8. մատրվակ

34 **Ո՞ր բառերի առաջին արմատն է միավանկ:**

1. գարեջուր, 2. ուսումնատենչ, 3. բարձրուղեշ, 4. ագեվազ, 5. տարեդարձ, 6. հայրենադարձ, 7. ճամփաբաժան, 8. երախտամոռ

35 **Ո՞ր նախադասություններում անուղղակի խնդիր կա:**

1. Անկեղծության պահերին միշտ ներողություն էինք խնդրում մեզնից նեղացողներից:
2. Միրհավը, հանգիստ քուջուջ անելով, փոխում էր արնագույն տոտիկները և կտուցով քրքրում լորենու փափուկ տերևները:
3. Ու ձորի գլխին մոլորված կանգնած՝ Նայում է ներքև՝ սիրտը սևակնած:
4. Հանկարծ մրրկաշունչ կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին, շպրտվեց մի կողմ և թաղվեց գետնի մեջ:
5. Ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշյունը, մասրենին իր ծաղկաբաժակը պահել է ոսկեզօծ արևի տակ, և կանաչ դաշտում արածում է մի աստղազարդ ձի:

36 **Նախադասության անդամներից որո՞նց ձևաբանական վերլուծությունն է սխալ:**

Նա հայացքով փնտրում էր կարճահասակ ինչ-որ մեկին, որ կաղալով քիչ առաջ արագ-արագ չքացել էր ալիք տվող բազմության ծովում:

1. **առաջ** – կապ, հետադրություն
2. **որ** – ստորադասական շաղկապ
3. **կաղալով** – անորոշ դերբայ, գործիական հոլով
4. **արագ-արագ** – ձևի մակբայ
5. **մեկին** – թվական, որոշյալ առում
6. **չքացել էր** – սոսկածանցավոր բայ

37 **Ո՞ր նախադասություններում ածական կա:**

1. Օժտի՛ր այնպիսի շենք ու շնորհքով, Որ ես քո հասկի շշուկը դառնամ:
2. Մի սուլոց եկավ հեռու մի բակից, Խլացավ այգու դարպասի վրա:
3. Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջների մեջ:
4. Թուղթը, որ տատս դրեց սնդուկի մեջ, մեզ համար դարձավ ամենից թանկը:
5. Մի փրկություն կա միայն, Լոկ մի ճանապարհ:

38 **Ո՞ր նախադասություններում մեկից ավելի բուք պիտի դրվի:**

1. Նրանք լռելյայն ձիերն էին համեմատում իրար ուշիուշով դիտում որոշելու որի ձին կտանեն որինը կթողնեն որի սանձն ու թամբը տերը շալակած տուն կբերի:
2. Թող տեսնեն ու իմանան, որ Գայլ Արշավիրն օրհասական ժամին իրենց հետ է մտածեց նա ձեռնափայտին կռթնած դուրս ելավ դաստակերտից քայլերն ուղղելով բլուրն ի վեր:
3. Ամեն անգամ օտար երկրներում շրջագայելիս նոր աշխարհներ տեսնելու հաճույքի հետ ճիշտն ասած մեջս միշտ ապրել է տուն վերադառնալու սպասման երանությունը:
4. Տուն հասնելու հենց հաջորդ օրը ավտոմեքենա պիտի նստեմ ու գնամ Թալինի շրջանի գյուղերից մեկը Վերին Սասնաշեն ուր ազգականներ չունեմ իսկ ընկերներ շատ:
5. Երկար որոնելուց հետո գտա տունը և պարզվեց տանտեր Գևորգ Հակոբյանը Ջերմուկում է բուժվելու է գնացել:

39 **Բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից:**

ասպնջական–հյուրընկալ, ձուլվել–անէանալ, սևեռուն–անքթիթ, աչառու–անկողմնակալ, կերկերուն-խրթին, տարտամ–անորոշ, զտարյուն–կորովի, այլազան–տարբեր

40 **Բառերից քանիսո՞ւմ սղում կա:**

փոքրիկ, լուսավոր, առաջնային, պատանյակ, ակնթարթ, ձեղնահարկ, մաքրակենցաղ, պատմագիր

41 **Տրված գոյականներից քանի՞սն են դրված բացառական հոլովով:**

մերոնց, անկողնուց, լուցկուց, ձիուց, պատարագից, մարդուց, հանպատրաստից, բարդուց

42 **Նախադասություններից քանիսո՞ւմ ժամանակի պարագա կա:**

- Ջրտուքի այդ գիշերներին լուսինը շողք էր գցում առվի մեջ:
- Մինչև զառիվայրի սկիզբը ճանապարհն անցնում էր փոքրիկ տափարակով:
- Ամպամած այդ օրից հետո չեմ բարձրացել բրուտների ճանապարհով:
- Երբեմն ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին:
- Նայում եմ ամպին ու մտածում, թե Անդոն երբ է հասցրել ընկալել այդ ամենը:

43 **Նախադասության անդամներից քանիսի՞ շարահյուսական վերլուծությունն է ճիշտ:**

Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, որդին վերադարձավ Աշտիշատի վանքից և մորը տեղյակ պահեց իշխանի անսպասելի ժամանելու մասին:

- **հաջորդ օրը** – ժամանակի պարագա
- **մորը** – հանգման անուղղակի խնդիր
- **անսպասելի** – ձևի պարագա
- **տեղյակ պահեց** – պարզ ստորոգյալ
- **իշխանի** – հատկացուցիչ
- **ժամանելու մասին** – վերաբերության անուղղակի խնդիր

44 **Հատվածներից քանիսի՞ դիմաց է սխալ նշված, թե որ հայերենով է այն:**

- Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի:- *գրաբար*
- Յետ այսօրիկ ապստամբեաց ի թագաւորին հայոց եւ ձեռին իշխանութեանն տանն հայոց թագավորին: - *միջին հայերեն*
- Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պըտուղ կու տայ:- *միջին հայերեն*
- Նա կը հիշեցնե այն չքաղված խաղողի հատիկը, որ կեցած տեղը, բիրտ հպումներե հեռու թոռմելով, ավելի ևս կը քաղցրանա: - *արևմտահայերեն*
- Էն լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերքը, նրանց արածներն ու ասածները:- *արևելահայերեն*

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բոլոր անձնական դերանունները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում հոլովվում են գոյականներից տարբեր՝ դերանվանական հոլովմամբ:
2. Առարկա ցույց տվող դերանուններից ոչ բոլորն ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ:
3. Ցուցական դերանունների մի մասը կազմված է ***այս, այդ, այն*** և ***պես, քան, ինչ, չափ, տեղ*** բաղադրիչների միացումով:
4. ***Ո՞ր, քանի՞*** հարցական դերանուններից ***-երորդ*** ածանցով կազմվում են թվականներ:
5. Դերանվան բոլոր տեսակները պարունակում են այնպիսի միավորներ, որոնք կարող են հանդես գալ ենթակայի պաշտոնով:
6. Հարաբերական դերանունները, ի տարբերություն ստորադասական շաղկապների, դառնում են նախադասության անդամ:

Բ մակարդակ

46 **Ո՞ր շարքում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնցում ուղղագրական սխալ *չկա:***

Երբեմն(1), երբ ընկնում էր խարնիխուռն(2) մտքերի լաբիրինթոսը, և հոգին փոթորկվում էր մրրկածուփ(3) օվկիանոսի(4) պես, հիշում էր այն աղքատիք(5) շրջանը, ուր իր հոգին անդորրություն(6) էր գտել, և նրա առջև հառնում(7) էր մի դեմք՝ նրփիկ(8) ու համեստ, բայց առժանապատիվ(9): Կրծքից արձակելով զղջման(10) հառաչանք՝ խորհում էր, որ իր ապօրինի(11) զգացումներով ոտնահարում է մի ամբասիր(12) աղջկա անուն:

1) 2, 4, 5, 6, 7, 10, 12
2) 1, 3, 5, 7, 8, 9, 12
3) 2, 3, 5, 6, 8, 10, 11
4) 1, 3, 4, 7, 10, 11

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) դեմ(հանդիման), առոք(փառոք), ի(դեպ)
2) Սանկտ(Պետերբուրգ), տարուց(տարի), ալ(կարմիր)
3) երեք(հազար), ի(զուր), ձեռք(ձեռքի)
4) ըստ(իս), մի(երկու), ընդ(հատակ)

48 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:**

1) ՇԻՐԱԿԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ՇՊԻՑԲԵՐԳԵՆԻ ԱՐՇԻՊԵԼԱԳ, ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԻՆ
2) ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՈՆ, ՄՈՍԿՎԱՅԻ ԼԱՋԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ
3) ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ, ՊԱՆԱՄԱՅԻ ՋՐԱՆՑՔ, ԹԱԴԵՎՈՍ ԱՌԱՔՅԱԼ
4) ՇԱՄԻՐԱՄԻ ԿԱԽՈՎԻ ԱՅԳԻՆԵՐ, ՊԱՐԱԳՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՊԻՐԵՆԵՅԱՆ ԹԵՐԱԿՂԶԻ

49 **Փակագծերում տրված բառերից կամ բառաձևերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. Առաջադեմ գրողը իր հայրենիքի դիվանագետներին կհուշի խոսք բացել հայերին պատճառված վնասի մասին և վեհանձնաբար հանձն առնել վնասի (1. հատուցումը, 2. հարուցումը):
բ. Երիտասարդը (1. ասպանդակեց, 2. ասպատակեց) ձին. նա պոկվեց տեղից ու սլացավ:
գ. Առավոտից մինչև առավոտ ոտքերիդ ներքևում ես քեզ եմ հսկում (1. անշեջ, 2. անխոնջ) ու արթուն:
դ. Հոգնած ու հուսաբեկ ընկավ դռան առջև՝ մի քարի վրա, (1. խորշոմած, 2. խորագնին) ճակատը սեղմեց չոր ծնկներին:

1) ա-2, բ-1, գ-1, դ-1
2) ա-1, բ-2, գ-2, դ-2
3) ա-2, բ-2, գ-2, դ-1
4) ա-1, բ-1, գ-2, դ-1

50 **Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ *չեն:***

1) Նվագարանին նոր **լարեր** էին հարկավոր:
   Եթե նա միտքը **լարեր**, ամեն ինչ կհիշեր:
2) Ծանրամարտիկը **հրում** վարժությունում բարձր արդյունք ցույց տվեց:
   Նա համառորեն դեն էր **հրում** ուտելիքը:
3) Մայրը խմորի **գունդը** թողեց սեղանին ու դուրս եկավ:
   Սյունյաց ուխտադրուժ **գունդը** պարսից զորքի աջ թևում էր:
4) Անձրևի **ծանը** կաթիլները թափվում էին ցած:
   Ծանը ժամեր անցկացրինք նրան սպասելիս:

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերը մեկից ավելի ածանց ունեն:**

1) անփութորեն, տմարդի, կանխատեսում, հակակրանք
2) առաջին, գետնատարած, դիպվածաբար, գերադասելի
3) պահակային, ծածկադմփոց, վարորդական, կառուցապատում
4) մշակութային, համակարծիք, անտրամադիր, բացահայտիչ

52 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:**

1) ***գլխով քամի անցնել***–դատարկ բաներ մտածել, ***ծնոտը թուլացնել***–շատախոսել
2) ***արևի երես հանել*** –բացահայտել, ***պատի ծեփ դառնալ*** –խիստ համառել
3) ***բաժակը լցվել***–համբերությունը հատնել, ***կրակի վրա ջուր լցնել*** –կրքերը հանդարտեցնել
4) ***թռչունի թևով*** –շատ արագ, ***սրտից ջուր խմել***–ցանկացածի պես խոսել կամ վարվել

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերանուններ:**

1) որևէ, ինչ-որ, ոչ մեկը
2) այսինչ, ուր, որոշ
3) ոմն, մի քանի, երբևիցե
4) այլ, ուրիշ, որքան

54 **Ո՞ր նախադասության մեջ բայի սխալ ձև *չկա:***

1) Ալիքները հսկա սառցաբեկորները հեռացրեցին դեպի ծովի խորքը:
2) Սարի հետևում հանգան վերջին շողերը, և մենք շարժվեցինք դեպի վրանները:
3) Ծովի մեղմօրոր ալիքները դիպչեցին նրա մերկ սրունքներին, և նա սրթսրթաց:
4) Գարնանային արևը հալացրել էր ձյունը, ու վարարած գետերը դուրս էին եկել իրենց ափերից:

55 **Ո՞ր նախադասության մեջ բայի հարկադրական եղանակով արտահայտված ստորոգյալ *չկա:***

1) Նա տեղյակ պահեց, որ իրեն գումար է պետք՝ մի քանի անհրաժեշտ իրեր գնելու համար:
2) Ուր էլ որ լինեմ, անձրևն սկսվելուն պես պիտի մի առանձին հաճույքով կանգնեմ նրա տակ ու թույլ տամ, որ թրջի ինձ հիմնովին:
3) Նա ինձ ասաց, որ ես նոր եմ ոտք դնում կյանք և պետք է իմանամ, թե դեռ ինչեր են սպասում ինձ:
4) Գյուղի մեծ փողոցը մեր տան առաջով էր անցնում. ուրիշ գյուղից եկողը մեր տան կողքով պիտի գնար:

56 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) խաչակիր, վաչկատուն, վագր, վիպագիր
2) շիկամուկ, այգեգործ, կաթնատուն, հերթապահ
3) սերմնացան, ոտնաձայն, անասնապահ, հրձիգ
4) չափահաս, վառելանյութ, դաշույն, ձրիակեր

57 **Ո՞ր նախադասության մեջ հոդի գործածության սխալ *չկա:***

1) Կանչենք այն մարդկանց, որոնք սպասում են իրենց մրցանակներին, պարգևներին կամ որևէ այլ նվերին:
2) Ներկայացումն սկսվեց. ահագնադողդոդ ծափերը անմիջապես խախտեցին դահլիճի լռությունը:
3) Ամռան երկար օրերին էլ արևն հազիվ մի քանի ժամ է լույս տալիս Մթնաձորի անտառներին:
4) Այդպիսի խորհրդանիշ օգտագործում է ամեն երկիրը:

58 **Ո՞ր նախադասության մեջ են ընդգծված երկու բառերն էլ կապեր:**

1) Ավին հիմա էլ ողջ է, <u>չնայած</u> սովորական մարմնի վրա գլխի <u>փոխարեն</u> մարդկային գանգ է՝ամբողջովին կլպված, առանց մազի, առանց մորթու:
2) Հոր տնից վերադառնալուն <u>պես</u> Սանդուխտը սկսեց արագ-արագ հավաքել տնով <u>մեկ</u> թափթփած իրերը, նախքան սկեսուրը կգար եկեղեցուց:
3) Նրա հայացքը արձանի նման սևեռված մնաց մխացող օջախին, մոխրի <u>մոտ</u> չոքած կնոջը. որտե՞ղ էր տեսել նա <u>նման</u> մի դեմք:
4) Հույների նավերը <u>հետ</u> էին դառնում այն նավահանգիստը, որ վաղուց չէր, ինչ թողել էին՝ <u>դեպի</u> մեծ Տրոյա նավելու համար:

59 **Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ *չկա:***

1) Քնելուց առաջ տան դուռը փակում էին կա՛մ պապս, կա՛մ մեծ հորեղբայրս:
2) Պարզ դարձավ, որ ամբոխը չեն հավատում իրենց առաջնորդին:
3) Ե՛վ Զանգու գետի ափին հանգստացողների ուրախ աղմուկը, և՛ ծաղկած ծառերի բույրը հոգիդ լցնում է քաղցր զգացողությամբ:
4) Պատուհանից երևացող սարը՝ ձյունաճերմակ գագաթով, նրա փեշերին փռված անտառը՝ եղևնիների ու թխկիների խիտ շարքերով, ինձ հրաշք թվացին:

60 **Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ *չկա* (նախադասությունները կետադրված չեն):**

1) Առավոտ էր Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը:
2) Գնա և պատգամիր հանուր աշխարհին հարավին հյուսիսին արևելքին արևմուտքին երջանկության իմաստը:
3) Եղնիկը գիտեր որ ինքը ղողանջուն անտառների ազատ երեխան ծնվել է այդ հեռու անտառներում:
4) Կայսրը որպես երկնքի որդի հավակնում էր կարծել թե իրավունք ունի տիրելու ինչպես մարդկային տարերքին այնպես էլ բնությանը:

61 **Ո՞ր նախադասության մեջ բառակապակցությամբ արտահայտված որոշիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Գրողը ձգտում է հասնել աստվածային կատարելության:
2) Կուրծքը սպիտակ ջրածտերը թռչում են քարից քար ծլվլում:
3) Վար անող գյուղացին հանկարծ մի կավե կճուճ է գտնում:
4) Երբ նա արցունքից թեթևացած ու հանգստացած բարձրացրեց գլուխը աղջիկն արդեն գնացել էր:

62 **Ո՞ր նախադասության դերբայական դարձվածի պաշտոնն է սխալ նշված:**

1) Այդ օրերին նրան համարում էին միջոցառումների լավագույն վարողը, և շատերն էին նրան դիմում: *(ենթակա)*
2) Բեռլինյան այս տան լուսամուտների տակով անցնելիս օտարերկրացիները հաճախ էին կանգ առնում: *(ժամանակի պարագա)*
3) Հաճախ մի շաբաթվա հացի փողը ես ծախսել էի, որ գնամ՝ գոնե մի րոպե նրան տեսնելու: *(նպատակի պարագա)*
4) Իմ մասին ասված այս միամիտ գովասանքը ինձ մի փոքր մխիթարեց: *(որոշիչ)*

63 **Ո՞րն է բարդ նախադասություն (նախադասությունները կետադրված չեն):**

1) Շատերն էին գալիս այստեղ գործով կամ զրույց անելու և ժամանակ անցկացնելու համար:
2) Ձիավորների մի մեծ խմբի առջևից գնում էր շքեղ զգեստներով փաշան շրջապատի կոտորածին անտարբեր:
3) Այստեղ ես ավելորդ չեմ համարում մի քանի կրճատումներով և առանց փոփոխելու վկայակոչել իմ այն ժամանակվա հատուկ ոճն ու լեզուն:
4) Օրը մի քանի անգամ նրանք նայում էին ամրոցի շուրջը տարածվող դաշտերի հեռուն պարզելու չի երևում արդյոք թշնամական մի շարժում հեծյալների մի խումբ:

64 **Ո՞ր նախադասության մեջ ստորակետ *չպիտի* դրվի:**

1) Իրադարձությունները սկսվեցին հետևյալ կերպ Զարուհի անունով օրիորդի մոտ խռովարարական թղթեր հայտնաբերեցին ու նրան ձերբակալեցին:
2) Աղելինան հագել էր մետաքսյա զգեստ կիսակարճ թևքերով և մազերը հավաքել նուրբ ժապավենով:
3) Իրար հանդիպում էինք վերհիշելու քսանականների Երևանը և հաճախ էինք քննարկում ներկան ու ապագան:
4) Նորից հին մտքերից խռովվեց հոգիս և որոշեցի գնալ Ասպրամի խուցը դուրս բերելու այդ թշվառ կնոջը աշտարակից և վերադարձնելու նրան իր տիկնությունը:

65 **Հ. Թումանյանի «Անուշ» պոեմում ո՞վ է Անուշին խորհուրդ տալիս.**

Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կգա, մի քիչ կաց,
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,
Ա՜խ նա գնաց, նա գնա՜ց…

1) ծերունին
2) անցվոր ախպերը
3) ընկերուհին
4) Անուշի մայրը

66 **Ո՞ր տարբերակը պետք է տեղադրել բաց թողած տեղում:**

Անտառում խորին խորհուրդներ կային,
…… կային անտառում,
Օրոր էր ասում աշունն անտառին,
Սակայն անտառի քունը չէր տանում:

1) Կապույտ մշուշներ
2) Մարդկային հետքեր
3) Խոնավ բուրմունքներ
4) Եվ արձագանքներ

67 **Ո՞ր մտքերն են բխում տեքստի բովանդակությունից կամ *չեն* հակասում նրան:**

1982 թվականին անգլիացի հետազոտող Ջ. Ֆարմանը Անտարկտիդայի վրա հայտնաբերեց մթնոլորտային շերտի ճեղքվածք՝ ավելի քան 1000 կմ տրամագծով: Սա մեծ տագնապ առաջացրեց. չէ՞ որ օզոնային ճեղքերը խիստ վտանգավոր են կենդանի օրգանիզմների համար: Այդ շերտը պաշտպանում է Երկրի մակերևույթը Արևի ուլտրամանուշակագույն ճառագայթներից՝ թույլ չտալով դրանց՝ չափից մեծ քանակի ներթափանցումը: 1985-ին ընդունվում է Վիեննայի համաձայնագիրը՝ օզոնային շերտի պահպանման վերաբերյալ, ըստ որի՝ նախատեսվում է պարզել օզոնային շերտի քայքայման պատճառները և միջոցներ ձեռք առնել դրանց վերացման ուղղությամբ:

Բայց մինչ գիտնականները զբաղված էին այս ուսումնասիրություններով, 1992-ին մեկ այլ ճեղք հայտնաբերվեց, այս անգամ՝ Արկտիկայի վրա, հետո՝ Ուրալյան լեռների հատվածում: Ուսումնասիրողները երկար տարիներ ենթադրում էին, որ օզոնային շերտի նոսրացման ու ճեղքերի գոյացման գլխավոր մեղավորը մարդու արդյունաբերական գործունեությունն է, հատկապես այնպիսի օզոնաքայքայիչ նյութերի արտադրությունը, որոնցից է, օրինակ, ֆրեոնը, որը լայն կիրառություն ունի սառեցնող սարքերում:

Հակառակն ապացուցեցին հետագա հետազոտությունները. օզոնային ճեղքերը ոչ մի կապ չունեն մարդու գործունեության հետ: Դրանց գոյացումը կապված է Երկրի առանցքի, ուստի և բևեռների աստիճանական փոփոխման հետ, ինչի պատճառով մոլորակի որոշ հատվածներում թուլանում կամ լրիվ բացակայում է մագնիսական դաշտը: Նման վիճակ մեր մոլորակը առաջին անգամ չէ, որ տեսնում է, և դա բնակլիմայական լուրջ փոփոխությունների է հասցնում՝ ազդելով և՛ կենդանիների, և՛ մարդու վրա:

1. Երկիր մոլորակի բևեռների փոփոխվելը, որ պարբերաբար ի հայտ եկող երևույթ է, ազդեցություն ունի նրա մագնիսական դաշտի վրա:
2. 1982-ին գիտական շրջաններում անհանգստություն առաջացրեց Անտարկտիդայի և Ուրալյան լեռների վրա հայտնաբերված մթնոլորտային շերտի՝ 1000 կմ տրամագծով ճեղքվածքը:
3. 1985-ի համաձայնագրի հիման վրա ձեռք առնված միջոցները էլ ավելի բարդացրին իրավիճակը. ճեղքեր առաջացան երկրագնդի նաև այլ վայրերում:
4. Օզոնային շերտը խիստ կարևոր է կենդանի օրգանիզմների համար, քանի որ այն պաշտպանում է Երկրի մակերևույթը ուլտրամանուշակագույն ճառագայթներից:
5. Ըստ գիտնականների վերջնական եզրակացության՝ օզոնի քայքայման պատճառը մարդու արտադրական գործունեությունից առաջացող որոշ նյութերն են:

68 **Տրված հատվածում համարակալվածներից որո՞նք են գոյական:**

Ե՛վ 1. <u>հայոց</u> մեր 2. <u>շարժումը</u>, որն այնքան 3. <u>բան</u> է ասում, և՛ ծնկներին 4. <u>խփելն</u> ու 5. <u>պայթուն</u> ծիծաղը, և՛ հայերեն բառը, 6. <u>նայվածքը</u>, ժպիտը զարմանալի այս 7. <u>ցեղի</u> զորավոր 8. <u>հառնումն</u> են ցուցադրում:

69 **Ո՞ր նախադասություններում նպատակի պարագա կա:**

1. Նա երբեք չէր մտածել, որ կավը, բացի թասերից, գավերից, փարչերից և աղյուսներից, կարելի էր օգտագործել և անմահության համար:
2. Նրա համոզմամբ արձաններ քանդակելու գյուտը բացառապես պատկանում էր իրեն, որովհետև նա չէր տեսել՝ արձանն ինչպես են քանդակում:
3. Ձեռքը երկարեց՝ դուռը բաց անելու, բայց հանկարծ սկսեց լաց լինել մանկան նման:
4. Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սազով, քամանչով, «Ի՞նչ պիտի անի աշխարհում էս անմիտ-անճարը»,- ասին:
5. Ինչի՞ց, ինչի՞ց խռովեցիր, Գոնե պատճառն իմանամ:
6. Քեզ փորձելու համար եկա, Հո չի՞ փոխել կյանքը քեզ:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Ուղիղ խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որը ներգործում է ենթակայի վրա:
2. ***«Նա որոշել է դառնալ օդաչու»*** նախադասության մեջ ***օդաչու*** բառը ուղիղ խնդիր է:
3. Ուղիղ խնդիրը կարող է արտահայտվել կապական կառույցով:
4. Ուղիղ խնդիր լրացում կարող են ստանալ միայն ներգործական սեռի բայերը:
5. Ուղիղ խնդիր ունեցող նախադասությունը կրավորական կառույցի վերածելիս ուղիղ խնդիրը դառնում է ենթակա կամ ներգործող խնդիր:
6. Ենթակայական դերբայը կարող է ունենալ ուղիղ խնդիր լրացում: